

9.

մարդկային արդարադատութիւնը գոհացրած է համարում: Բայց գոհացրած է արդեօք բարոյականութեան, խղճմանը, մարդասիրութեան պահանջը: Ի հարկէ ոչ Հասարակութիւնը մոռանում է, որ յանցաւորները, արատաւորները դուրս են գալիս նոյն հասարակութեան միջից, որ նրանք արդիւնք են շատ անգամ անարդար սոցիալական կազմակերպութեան, վատ դատարարականութեան, և այնպիսի աննպաստ պայմանների, որոնց ստեղծման մէջ մեղաւոր է ինքը հասարակութիւնը և որոնց նա կարող էր և պարտաւոր է վերացնել: Հասարակութիւնը մոռանում է նոյնպէս, որ յանցաւորներին միայն բանտը գցելով, չէ կարելի ուղղել նրանց, որ նրանք բանտից դուրս գալով, դարձեալ պետք է մտնեն կեանքը և գործեն նախկին պայմանների մէջ: Վերջապէս հասարակութիւնը հող չէ ասանում՝ ստեղծելու այնպիսի պայմաններ, որպէս զի իր յանցաւոր և արատաւոր անդամը, պատիժը կրելուց և բանտից դուրս գալուց յետոյ, նպատաւոր չող գտնի ազնիւ, շիտակ կեանքի համար, ուղղի և այլ ևս չը վերադառնայ իր արատաւոր հակումներին ու ձգտումներին:

Այդ ուղղութեամբ ոչինչ չէ արվել կամ շատ քիչ բան է արվել: Բանտարկվածը, դուրս գալով բանտից, զգում է իրան դարձեալ հասարակութեան խորթ որդի: Նա դարձեալ հալածվում է, իրան արտաքսված է զգում հասարակութիւնից: Նա ձգտում ունի ապաշխարելու, ուղղվելու, ուղիղ ճանապարհի վրա կանգնելու, բայց ոչ ոք չէ խրախուսում նրան, ոչ ոք միջոց և հնարաւորութիւն չէ տալիս նրան: Եւ անհարաւացած, նա շարունակում է ընթանալ իր նախկին ճանապարհով, որը դարձեալ տանում է նրան դէպի բանտը և վերջնական անկողնու:

Այս այդ պատճառով չէ կարելի համակրութեամբ չը վերաբերվել այն ծրագրին, որ առաջարկել է Նովգորոդի նահանգական դատարանի պրօկուրօրը և որի նպատակն է հնարաւորութիւն տալ բանտից դուրս եկող անձանց ուղղվել և հասարակութեան օգտակար և աշխատանքի անդամ դառնալ: Նա առաջարկում է, որ հասարակութիւնը չհինչի ամեն մի տեղ, ուր բանտ կայ, բանտային հովանաւորութիւն է ունի ընկերութիւն, որի յատուկ նպատակը լինի օգնել բանտից դուրս եկողներին՝ կանգնելու կեանքի ազնիւ ճանապարհի վրա, ցոյց տալով նրանց բարոյական և նիւթական աշակցութիւն, որոնցով նրանց համար յարմար գրադմունք է դարձ, հայթհայթելով նրանց մտաւոր և մարմնային ընթերցարաններ, կիրառելի արհեստ դպրոցներ և դաստիարակութիւնների միջոցով, վերջապէս հող տանելով նրանց դասակների կրթութեան մասին, մինչև որ իրանք կարողանան ոտքի կանգնել: Այն դրանք են բանտային հովանաւոր ընկերութիւնների գործունէութեան օգտակար և համակրելի ապագայը: Միայն այդ եղանակով հասարակութիւնը կը կարողանայ թէ՛ բանտերի թիւը քննարկել և թէ՛ միջոց տալ իր արատաւոր անդամներին՝ շիտակ, ազնիւ և օգտակար կեանք վարելու:

ՆԱՄԱԿ ԶՈՒՇՈՒՅ

Յուլիսի 23-ին

Յուլիսի 18-ին կայացաւ դերասանական խմբի ութերորդ ներկայացումը: Փառաշունչ Փարիզի աղբաւանդ մեղոգրաման: Բաղադրողներ թուում քիչ աչքի ընկնողներն էին՝ օր. Վարդիթեր, պ. պ. Վրոյր և Օսանեան, որոնք իրանց խաղով բաւարարեցին: Մնացածները թող խաղացին: Բենեֆիցիանտը, դերասան Վրոյր, հասարակութեան կողմից ընծայ տոացաւ մի ծրարի մէջ ներկայացւած, երեակայեցէ... 32 բուրլի: Մեր խնայողը հասարակութիւնը այդ երեկոյ չէր բարեհաճել խաւորն գալ, դաշխիթի 2½ մարդ դատարկ էր: Ամսի 22-ին էլ կայացաւ խմբի իններորդ ներկայացումը՝ ի նպատակ պ. Մամիկոնեանի: Խաղացին Վարդիթի «Զարագուշակ քայլ» 4 գործողութեամբ դրաման և «Մկնիկ» վոդեվիլը: Դրաման բովանդակութեան կողմից ինքն ըստ ինքեան ոչինչ չէ ներկայացնում և ոչ մի պատգամութիւն չէ անում մարդու վրա: Մերուշի Միխայիլ Պեչորինի դերը՝ պ. Մելիք-Յովսէփեան խաղաց անաշուք, գուցէ իր ամպուտայից դուրս լինելու պատճառով: Օր. Վարդիթեր Վարդաբա Միխայիլայի դերում բաւական լաւ էր, մանաւանդ վերջին գործողութեան մէջ, երբ նկատում է իր սիրահարից խաղված լինելը և խելացնոր կերպով վճռում է իր ձեռքը տալ չընդունել մարդու: Նենդ և փարթաւութեան բովից կամ կոմունի իւր Վարդիթայի դերը՝ ա. Զաքէ կատարեց մասամբ աջող: Վարդաբայի սիրահար՝ Ալեքսանդր Բորոյինի դերում՝ պ. Օսանեան բաւական լաւ էր: Վատ չէր նոյնպէս պ. Մամիկոնեան

պաշտօնակից քաղաքացի Նիկոլայ Բալալինի դերում: Միայն երրորդ գործողութեան ժամանակ, երբ դուրս էր կոմունիստ առաջ պաշտպանում է Վարդաբայի տանակոխ եղած իրաւունքները և յանդիմանում կոմունիստ, որ նա խել է խեղճ օրիորդի սիրահարին: Մնացած գործողութիւնների ժամանակ պ. Մամիկոնեան շատ էր ծամածռութիւններ անում: Բաւարար կարելի էր համարել և օր. Մարի-Հրանդի խաղը՝ Վարդաբայի աղանդի դերում: Պ. պ. Յարութիւնեան՝ կոմունիստ հաւատարմատար Պիտարովի դերում և Ջարիֆեան՝ ծառայի դերում վատ էին: Այդ երեկոյ, ըստ սովորութեան, դերեր չը զետէին պ. պ. Օսանեան, Մելիք-Յովսէփեան, Մամիկոնեան և Յարութիւնեան: Բենեֆիցիանտը դրամական ընծայ տոացաւ, երեակայեցէ... 34 բուրլի: Փառաւոր ամբողջատէս լի էր:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

(Հեռագրով)

Պետրօպոլի, յուլիսի 26-ին
Խորհրդի միջոցով տալ ինձ՝ «Մշակ» միջոցով յայտնելու իմ շնորհակալութիւնը այն անձանց, որոնք ամսին 25-ին շնորհաւորեցին իմ անուանակոչութիւնը: Դրա փոխարէն առաքում եմ նրանց իմ բարեմաղթութիւնը և օրհնութիւնը: Սերտակէտ Սրբեպիսկոպոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ անգամ մենք հաղորդեցինք մի լուր Լոնդոնում լինելի ժողովի մասին: «Daily News» լրագիրն այդ մասին հետեւեալն է հաղորդում. «Ներկայ բողոքէին Հայոց հարցն աւելի յուսալից դրութեան մէջ է գտնվում, քան եղել է վերջերս: Բայց թշուառ հայ ժողովուրդին նրա ընկերական ուղիով դրութեանը վերադարձնելու համար էական նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ հասարակութիւնը չարժանակի հեռաքրքրվել նրա բարեկեցութեան խնդրով: Այդ պատճառով շուտով տեղի կունենայ մի ժողով, կազմված անգլիական այն ընկերութիւններից, որոնք գործում են հայերի թշուառութիւնն ամբարձր համար: Ժողովը տեղի կունենայ Կարդիֆում սեպտեմբերի 23-ին և 24-ին: Պ. Բրայս, որ այնքան ջանք կընդունի հեռաքրքրված է եղել հայերով, ժողովի նախագահը կը լինի. ցուցակագրված են նաև անգլիացի մարդկանց անուններ՝ փոխնախագահութեան և կօմիտէի անդամակցութեան համար: Պրօֆեսօր Բալմոն, որ նոր է վերադարձել արևելքից, և պ. Նեյտարք Միլտարք, որ վերջերս այցելել է Հայաստանի այն վայրերը, ուր գտնվում են անկերական միսիօնարներ, կը տան ժողովին վերջին տեղեկութիւնները: Հայերի բարեկամները վերջին ժողովը տեղի ունեցաւ Լոնդոնում 1897 թիւ մայիսին: Հ. Մունրօ Ֆէրդուսոն, և պրօֆեսօր Վոնուէյ յանձն են առել տեղեկութիւն տալ յաջորդ ժողովի կազմութեան և ծրագրի մասին:»

Քուլթայիսի նահանգի նոր նահանգապետ գեներալ-մայօր Գերշիման կը ստանձնի իր պաշտօնը առաջիկայ սեպտեմբեր ամսին:

Երէկ ուղարկեցինք Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան խորհրդին 192 բուրլի, որ հաւաքված էր մեր խմբագրութեան մէջ (տես «Մշակ» № 4), Յովհաննէս Խաչատրեանի անուամբ ստիպելով հիմնելու համար Դրամով էլ փակում ենք այդ հանգանակութեան հաշիւը:

Մի մասնաւոր նամակով Վանից հաղորդում են հետեւեալը. «Կարողական քննութիւնները սկսվեցին յուլիսի 1-ին ու վերջացան 15-ին, քննութեանց ներկայ կը լինէին նաև թիւրք և հայ պաշտօնեաներ: Կուսակալն իսկ ներկայ եղաւ Վանի առաջնակարգ դպրոցներին: Երաժշտիկ դպրոցական քննութեան, ու դո՛ւ քննարկ տեսնելով դպրոցի առաջնակարգութիւնը: Այս տարի թէ՛ այդ և թէ՛ բողոքականաց դպրոցները վեց-վեց ընթացաւարտներ ընծայեցին, որոցմէ մի քանիսը յիշեալ դպրոցների մէջ պաշտօն պիտի վարեն:»

«Նոյայողական դրամակրկեր» գաղափարն այնպիսի ծաւալ է ստացել, որ շուտով անագին գումարներ կը ժողովին պետական գանձարանի մէջ իբրև պահեստադրամ: Միայն Մօսկվայում, ուր պետական գանձարանը բացել է 59 դրամակրկ, ներկայումս պահեստի համար ժողովված է մինչև 36 միլիօն բուրլի, որ պատկանում է 180,000 անձի:

Լրագիրներից տեղեկանում ենք, որ Գերշիման

գի և Պետրօպոլի մէջ երկաթուղու գծի աշխատանքները կը վերջանան մինչև առաջիկայ սեպտեմբեր ամիսը: Այնուհետև կը մնայ Բաղուր և Կերեւանի միջև գիծ անցկացնելը:

ԱՂԱՍԱՑԱՅԻՅ մեզ գրում են. «Աղստաֆայի Գիլիջան տանող խնդու վրա գտնվող թաւառաւայ կայարանում բացված է փօստատար: Այդ փոստատարը մեծ ծառայութիւն կը մատուցանի Չամբարակի կողմերում ապրող գիւղացիներին և ամառը այնտեղ հաւաքվող թափառականներին, որոնք մինչև այժմ նամակներ և դրամական ծրարներ ուղարկում էին և ստանում Գիլիջանի միջոցով:»

ՂՈՒԲԱՅԻՅ մեզ գրում են. «Գլուբա-Կերեւանի ճանապարհի վրա, Սամուր գետակի ափին, կարանին է հաստատված և ճանապարհորդապաշտաններին չեն թողնում անց ու դարձանք, քանի որ, ինչպէս հաստատում են պորտուգալ լուրերը, անասունների մէջ Կերեւանում վտանգաւոր հիւանդութիւն է տարածվել:»

ԴԱՐԱՆԱԳԵԱՂԱՅԻՅ մեզ գրում են. «Մօս օրերս Դարալագեանում մի ցաւալի և անախորժ գէպը պատահեց. Գլուբեան ձեռնարանի ուսանողներից մի քանի հոգի գալիս են Դարալագեան: Սուրբ Խաչ ուխտագիրն ճանապարհին նրանցից մէկը հիւանդանում է, մի կերպ նրան բերում են վանքը և խնդրն ուղարկում են բժիշկ Զախարովին հրաւիրելու, որը բնակվում է վանքից 20—25 վերստ հեռավորութեամբ: Աղանաձոր գիւղում, առաջարկելով նրան ի հարկէ կանխիկ ճանապարհի ծախսը: Ի՞նչ էր կարծում, բժիշկն մերժում է այդ խնդրիցը և, առանց հիւանդին տեսնելու՝ դեղեր է նշանակում: Անցնում է մի երկու օր, հիւանդը դրութեան աւելի է վատանում. այս անգամ վարդապետն ինքն է գալիս, բայց բժիշկը մի և նոյն կերպ է վարվում, ասելով՝ եթէ բժիշկի ներկայութիւնն անհրաժեշտ է, թող դիմեն ձեռնարանի բժիշկին, այսինքն 170 վերստ հեռավորութեան վրա գտնվող Ելմաձին գնան... Հիւանդը մի քանի օրից յետոյ վախճանվում է:»

ՔԱՐԱՎԱՆԱՐԱՅԻՅ մեզ գրում են. «Յուլիսի 21-ին սաստիկ կարկուտ եկաւ և փայցրեց Քրդական, Ալաշիր, Ռևալուր և Ուզունթալայի արտերն ու այգիները: Խեղճ գիւղացիները դարձեալ ընկան սուգի մէջ:»

ԴԻԼԻՋԱՆԻՅ մեզ գրում են. «Երէկ երեկոյան, մի գիւղական սայլի վրա նստեցրած, երկու կին բերեցին Գիլիջան, մի խումբ կողակ զինուորական և պահպանների ուղեկցութեամբ և ներկայացրին դաւառապետին, հետաքրքիր ամբողին իսկոյն չըջապատեց սայլը և շուտով յայտնի եղաւ, որ դրանցից մէկը՝ այժմ մեծ հռչակ ստացած դաւաղների աւագակ Թեօփի կինն է, իսկ միւսը սիրուհին՝ միակ պատճառը Թեօփի աւագակ դաւաղաւ: Ինչպէս լուցեցին՝ արանք բերում են Շարուր-Դարալագեանի դաւառի: Թէ՛ ուր է ուղարկվել եղել Թեօփի իր կանանցը, յայտնի չէ: Մանրամասնութիւններն աւայժմ յայտնի չեն:»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Միացեալ-Նահանգները չեն դադարեցնում պատերազմական գործողութիւնները, մինչև որ Սպանիան պաշտօնապէս չը յայտնի թէ ընդունում է յաղթողի բոլոր պայմանները և երաշխաւորութիւններ չի տալ այդ մասին: Պորտո-Րիկօ կղզում գնեցրալ Մայլս անդադար առաջ է դրում: Պրաւելով ճանապարհին պատահած քաղաքները: Սպանիայից դուրս յայտնվող զինուորական թիւն են ցոյց տալիս: Ամերիկացիների նպատակն է պաշարել կղզու գլխաւոր քաղաք Սան-Խուանը ցամաքի կողմից և դրաւել նրան Սան-Նազօի պէս, այսինքն նաւաւորով աշակցութեամբ: Գնեցրալ Մայլս հաղորդել է Վաշինգտօնի կառավարութեան որ Պորտո-Րիկօում տեսնական աղբարակութիւնը մեծ ճանակարնելով է վերաբերվում ամերիկացիներին: Պօնտ քաղաքից սպանիացիները այնպիսի արագութեամբ հեռացան, որ թողնելիս իրանց զենքերն ու հաղթանիւղերը և մօտ 50 հիւանդ զինուորական հիւանդանոցում: Քաղաքի բնակիչները տօնեցին ամերիկացիների դաւառը: Սակայն եթէ այդպէս են տեղացիները այն կէտերում, ուր երեւում են անկերական զօրքերը, Պորտո-Րիկօի պարլամենտը ուրիշ կերպ է վերաբերվում գէպի մեծ հանրապետութիւնը: Նա միւսմայն ընդունեց նոր սահմանադրութիւնը, որ մշակված է կղզուն

տուած ինքնավարութեան հիմքերի վրա և վճեց գիւղերը բոլոր մեծ պետութիւններին և ամերիկական կառավարութեան հետեւալ յայտարարութեամբ. «Շնորհիւ ինքնավարութեան, որ տուած է կղզուն, Պորտո-Րիկօ դարձել է կառարեալէս անկախ պետութիւն և ունի այն բոլոր ազատութիւնները, որոնք Հիւսիսային Ամերիկայի իւրաքանչիւր նահանգին են տրված: Ամերիկացիների յարձակումը կղզու վրա կը լինի մի փորձ իրել ինքնավարութեան ազատութիւնները մի պետութիւնից, որ ստեղծված է ամերիկական ձեռք, իսկ դա համահասարակ կը լինի այն սկզբունքներից հրաժարվելուն, որոնց համար Միացեալ-Նահանգները պատերազմ սկսեցին: Պարլամենտը նիստեր ունի Սան-Խուանում. գնեցրալ Մայլս, ինչպէս ստացելէ, գնում է դէպի այդ քաղաքը, հետեւաբար պարլամենտի յայտարարութիւնը ոչինչ ազդեցութիւն չարաւ ամերիկացիների վրա:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՅ

Բօստօն, յուլիսի 18-ին

Սանթ-Նազօի վրա այսօր ամերիկեան զրօշակը կը ծածանի. երէկ, երբ սպանիական զրօշակը վար կիլիշէր, սպանիացի հայրենասէրներ այս անգամ տեսարանին առջև կարտասուխ եղեր, և երբ դեղին ու կարմիր գոյներուն տեղ աստղերը վեր բարձրանալ սկսեցին, ամբողջ ամերիկեան բանակը հօւր բաներով թիղաքացիներ է նոր գրաւուած քաղաքը: Ուրախանալու պատճառ ունին երեւելիքը, քիչ զոհեր տալով քաղաքաւարը մեծ առաւելութիւններ ձեռք անցուցին: 250-ի չափ մարդ կորսնցուցին, սպանիական նաւատորմով ընդունեցաւ, հաղարներով թշնամիներ կոտորուեցան, Սանթ-Նազօ դաւառը անձնատուր եղաւ 25,000 զօրի սպանիացի զին ուրեւրով: Ո՞վ չը պիտի նպատանալ իր զրօշակին փառքով վեր բարձրանալ տեսնելով:

Համաձայնութեան պայմաններու մասին հեռագիրը վաղուց ձեզ լուր տուած է. սպանիացիք այսօր այդ պայմաններու տրամադրութեան համեմատ սկսան զինաթափ ըլլալ, չըջականերէն յոյնաւ զինուորներու խումբը քաղաքը կուգան անընդհատ՝ զինաթափ մը դուռն իրենց ուսէն վար նետելու բեռ-հրացանը: Եթէ հաւատանք լրագրերու թղթակցներուն, այդ զինուորներէն շատերն այնքան ճանճրացել են իրենց քաղաք անօթութեան և ուրիշ զրկանքներէն, որ յօժարութեամբ վար կը նետեն այդ բեռը և անձկութեամբ կըստանան նոյն օրուան, որ եանքները գլխեք նաւերով իրենց հայրենիքը փոխադրեն: Այդ գերիներու մեծ մասն արդէն համակերպած իր պարագաներուն՝ այժմ աւելի հաշտ աչքով կը նային իր յաղթական թշնամուին, մանաւանդ երբ այդ թշնամին իր կառավարական պաշտօնեաներէն շատ աւելի խղճմտօքն կը կերակրէ և կը դարձանէ զինը: Միացեալ-Նահանգաց կառավարութեան ծանր դժուարութիւններէն մին է, սակայն, այդ զինուորներու փոխադրութիւնը. ամեն ջանք ի գործ կը դրուի որքան կարելի է, փութով դանդն Սպանիա զրկել. բայց 25,000 մարդ խօսքով չը փոխադրուիր: այսօր կառավարութիւնը պաշտօնապէս հրաւէր կարդաց երկրին կապալաւորներուն, որ իրենց պայմաններն առաջարկեն Նաւային ընկերութիւններ կը մրցեն այդ գործն իրարու ձեռքէ խլելու:

Սանթ-Նազօի դժուարութեան, չըսենք փորձանքներէն մին է դեղին տնիւրը: Քուպայի այդ սոսկալի տարափոխիլը բանակներու աւերիչ մահու հրեշտակը եղեր է: Սանթ-Նազօի անձնատուր ըլլալէն մէկ քանի օր առաջ մի քանի դէպքեր պատահեցան ամերիկեան բանակին մէջ, երբ հոս երկուութիւնն իմացուեցաւ, մեծ վախ յայտնեցին ամեն կողմէ, Ուաշինգթոնի կառավարութիւնը, մասնաւոր անմիջապէս հեռագրեց զօրապետ Շէֆթըրին շուտով վերջացնել բանակցութիւնները՝ զիմ թող անձնատուր լինի քաղաքը կամ թէ յարձակեցէ առանց յապաղման: Ամենը զիտէին, թէ ինչ մեծ փառնք կը սպանայ ամերիկեան զինուորին քաղաքէն դուրս անձրեկն տակ. բարեբախտաբար սպանիացիք անօթութեան վճատած և զխաւորաբար Ալբիւրայի տխուր բախտէն խրատուած՝ համաձայնեցան քաղաքը յանձնել, և այսպէս առանց կեանքի կորուստի ներս մտան ամերիկացիք. բանաւր փոխադրուեցաւ բարձր բուրներու գաղաթը, վարակեալները դաւեցին, բժշկական խիստ հակողութիւններ ձեռք առնվեցան, հակաանխաւաններով ուղղեցին ամեն տեղ, սակայն դեռ կարելի չեղաւ հիւանդութիւնը ջնջել, մինչև հիմա 500-էն աւելի դէպքեր պատահել են: Բարեբախտաբար տարափոխիլը շատ մեղմ տես

սակին է և տարածած խնամքները կրան շատե-
րու կեանքն ապահովել:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

—Արտաքան լրագրի մասին հետազոտում են
Կ. Պոլսից, որ զիջումատիական շրջաններում
հաւատարմացում են, թէ Կ. Պոլսի վերադար-
ձած ֆրանսիական դեսպան Կամբոն բերել է իր
հետ յուր ճիւղի հրահանգներ: Ենթադրում են, որ ե-
թէ Թիւրքիան այսուհետեւ էլ մերժի տալ խոս-
տացված վարձատրութիւնը ֆրանսիական հա-
տակներին այն վնասները համար, որ նրանք
կրեցին 1896 թվին հայերի կոտորածի ժամանակ,
Ֆրանսիան կը գրաւի որ և է մի ծովափնեայ
կէտ՝ Սիրիայում, իբրեւ պարագան:

—Կ. Պոլսից հետազոտում են, յուլիսի 16-ից,
«Temps» լրագրին, «Արտաքան դեսպանը վաղը
հրաւիրել է ժողովի Թրանսիայի, Անգլիայի և Ի-
տալիայի դեսպաններին՝ վերջնական որոշումն
կայացնելու կրետական հարցի մասին, և յայտ-
նելու սուլթանին, որ մեծ պետութիւնները ոչ
մի դէպքում թող չեն տայ, որ թիւրքաց զօրը
մտնի Արեւել: Հրաւիր ուղարկված է և Գերմա-
նիայի ու Աւստրիայի դեսպաններին, բայց նը-
րանք մերժել են, ասելով, որ իրանց կառավա-
րութիւնները ոչ մի անմիջական շահ չունեն
կրետական հարցում:

ԽՈՒՆ ԼՈՒՐԻՆ

Խնչպէս յայտնի է, ֆրանսիական կառավա-
րութիւնը զրկեց Զօլային Պատուի Լեգիօնի շքա-
նշանը կրելու իրաւունքից: Այդ վճռից յետոյ
մի քանի փոխակախներ, որոնք նոյնպէս Պատուի
Լեգիօնի ասպետներ են, յետ դարձելու կառա-
վարութեան իրանց շքանշանները: Յայտնի դը-
րամատուրդ Ժիւլ Բարբիէ, վերադարձնելով իր
շքանշանը, ասա ինչ է դրում. «Այս մարդիկ,
որոնց պատիւ է բերում այդ շքանշանը, ինչպէս
օրինակ, ձեր խնամքը ծնունդ, բայց կան և
մարդիկ, որոնք իրանք են պատիւ բերում նը-
րան. դրանց յիշել պատկանում է մեծ Զօլան,
որ բաւական ոյժ ունի սրբելու Թրանսիա-
յից այն ցեղը, որով ծածկում են նրան՝ նրա
պաշտպան համարվող վատ հովիւները»: Բար-
բիէի օրինակին հետեւեց և «Temps» լրագրի
խմբագիր Թրանսիա դը-Պրեսանտէ. նախագահին
ուղղված մի նամակի մէջ նա ասում է. «Ես մի
շատ անհաճոյ պայտքում եմ, որ երբեք այն շքա-
նշանը, որ պարուն էտեքհանգի կրծքից պոկված
չէ մինչև այսօր. ես չեմ կարող դարձրել ըզ-
դեստոս այն կարմիր-ժապաւենով, որ, անտա-
րակայն, դարձել է նշանաւոր արհամարհան-
քի դէպի օրինակ, որովհետեւ կառավարութիւնը
խելեց այդ շքանշանը այն դրոշմից, որ պահան-
ջում էր միայն յարգելի արդարադատութեան
տարրական երաշխաւորութիւնները»:

Հայկել են, որ Բիւսմարկ ապրել է ուղիղ հա-
զար ամիս (ծնվել է 1815 թվի ապրիլի 1-ին,
մեռել է 1898-ի օգոստոսի 1-ին, նոր տոմար-
ով): Եթէ Բիւսմարկ մի օր առաջ կամ յետոյ
աններ, այս «կոյր թիւը» խանգարված կը
լինէր: Բիւսմարկ թողել է մի քանի միլիօնի կա-
րողութիւն, կանխիկ դրամարկները մօտ, իսկ
անպիտան քանակում և Բիւսմարկի մօտ, իսկ
քանակները և ինքնակալին քարերը, որոնք մի-
լիօնների արժողութիւն ունեն, պահպանվում
են պալատական անտառաւոր Թրիւքենգերի մօտ:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՅ

ԱՄԵՐԻԿԱ-ՍՈՒՆԱՄԱՆԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՄԱԿԻՐԻ, 25 յուլիսի: Խնամակալ-խաղաչու
նախագահութեամբ կայացած միջոցաւորական ժո-
ղովի մէջ, Սաղատան եղբայրակեց վերջին օրե-
րը խորհրդի ընդունած որոշումները: Խաղաղու-
թեան բանակցութիւնները դեռ ոչ մի վերջնա-
կան հետեւանքի չեն հասցրել:

ՄԱԿԻՐԻ, 25 յուլիսի: Պաշտօնական հետազո-
րը Պորտո-Րիկոյից յայտնում է, որ գնդապետ
Սան-Մարտինը գնդակահար արվեց: Պոնսեն ա-
ռանց կռուի թողնելու համար: Փոխ-գնդապետ
Պոնսէ ինքնասպան եղաւ:

ՄԱԿԻՐԻ, 25 յուլիսի: Կարլիստները ենթա-
դրում են, որ Բարբիս, որ կարլիստների կու-
կապութեան պարագլուխն է պատգամաւորների
ժողովում, խորհրդակցութիւն չի ունենայ Սա-
գաստայի հետ:

ՄԱԿԻՐԻ, 26 յուլիսի: Յուլիսի 26-ին միջիս-
տրները հաւաքվեցին խորհրդակցելու: Սպանի-
այի պատասխանը Միացեալ-Նահանգներին են-
թարկված է խնամակալ-խաղաչու վաւերացման:
Կարծում են, որ պայմաններն ընդունված են:

ՆԻՒԵՐՈՒՆ, 26 յուլիսի: Ամերիկացիները գրա-
ւեցին Պորտո-Րիկոյի արեւելեան մասը առանց
զիմարդութեան:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 27 յուլիսի: Մայր հետազոտում
է Օւնէրին Պոնտիէ, որ, ուրբաթ, աննշան դի-
մաղորդութիւնից յետոյ, Գոլայեան անձնատուր
եղաւ:

ՄԱԿԻՐԻ, 27 յուլիսի: Խնամակալ-խաղաչին
խորհրդակցեց Սիլվեյոյի և մարշալ Կամպոսի
հետ և պէտք է խորհրդակցի Բոմբո-Րօլեդոյի
հետ: Սաղատան վերջացրեց իր խորհրդակցու-
թիւնները և բանակցութիւնները Կանալիստի
և դեներալ Կարլիսի հետ: Կարլիստ Բարբիս
չեկաւ տեսակցութեան Սաղատայի հետ:

ՄԱԿԻՐԻ, 27 յուլիսի: Սպանիան ընդունեց
Միացեալ-Նահանգների պայմանները: Սպանիայի
պատասխանը կը տաքվի Սպանիա տան մէջ
երեքշաբթի: Երբ պատասխանն ընդունվի Միա-
ցեալ-Նահանգների կողմից, պատերազմական
գործողութիւններն իսկոյն կը դադարեցնվեն:

ՊԱՐԻՉ, 25 յուլիսի: Պաշտօն մերժեց Զօլայի
բողոքը՝ վերադառնալու նահանգական դատարանի
վճար դէմ:

Կ. ՊՈԼԻՍ, 26 յուլիսի: Հիւպատոսական դե-
կլարացիան նայելով, ժամկարմիրներ մի խումբ
Հայկելի շրջանում խուզարկութիւն կատարեց
դէպ և յեղափոխական հրատարակութիւններ ո-
րոնքուր նպատակով և բանակցութիւններ գործեց
հայերի դէմ: Քիւրդերի ձեռքով կատարված ա-
ւարատութիւնների լուրը չէ հաստատվում:

ԿՕՊԵՆՀԱԳԵՆ, 26 յուլիսի: Այստեղ հասաւ
յոյնաց թագաւորը:

ԲԵՐԼԻՆ, 26 յուլիսի: Պաշտօնական լրագիրը
հաղորդում է, որ կայսրը երէկ, եկեղեցում Բիս-
մարկի յիշատակին կատարված հոգեհանգստից
յետոյ, հաւաքեց իր շուրջը եկեղեցու զաւթում
կանդիլին և միջնադարերին և մի ճառ արտա-
սանց նրանց առջի:

ՊԱՐԻՉ, 27 յուլիսի: Նախկին կայսրուհի Եւ-
գենիայի առողջութեան վիճակը լուրջ անհան-
գըստութիւն է պատճառում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԻՐԻ ԲՈՐՍՍ

Յուլիսի 24-ին

Լոնդոնի վրա 10 ֆունտ արծէ.	94	ը. 45	և.
Բեռլինի վրա 100 մարկ	48	» 27	»
Պարիզի վրա 100 ֆրանկ	37	» 45	»
Պոլսի վրա 100 ֆրանկ	—	» —	»
Մադրասի կուպոններ	—	» —	»
Բոստայի դիւիզիոն	4 1/2	» 6	»
4% պետական ընդհան.	101 1/2	» —	»
4% ներքին փոխառութեան	100	» —	»
4 1/2% դրամ. թղթ. աղ. կալ. բանկի	97 1/2	» —	»
4 1/2% վրայակ. դեւ. հող. բանկի	100 1/2	» —	»
Ներքին 5% առաջին փոխառութ.	289 1/2	» —	»
Նոյնը " երկրորդ	248 1/2	» —	»
5% դրամ. թղթ. աղ. կալ. բանկի	216	» —	»
5% պետական երկաթուղ. ընդհան.	—	» —	»
Պետերբ. թղթ. կը. ընդ. օր. 5%	101 1/2	» —	»
Սոսկիայի թղթ. կը. օր. 5%	100 1/2	» —	»
Օւնէսայի — — — — —	100 1/2	» —	»
Թիւրքի. — — — — —	100 1/2	» —	»
Թիւրքի. կալ. բանկի 6%	—	» —	»
Նոյնը — — — — —	—	» —	»
Վուսթայի կալ. բանկի 6%	—	» —	»
Նոյնը — — — — —	—	» —	»

Խմբագիր՝ Ա.Լ.ԲՈՐՍՍԻ ԲԱՆԱԿԱՆ
Հրատարակիչ՝ ԱՆԻՐԵԱՍ ԱՐԹՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՐԴՈՒՆԱԼ ՀԱՆՏԱՐԱՐՈՒՄ

Ս ա մ ս ո ն Ս տ ե փ ա ն ե ա ն

ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵՆՑ

ԸՆԴՈՒՆՈՒՄ Ե ՎՃԱՐԱՆԱԿՆ ԳՈՐԾԵՐ

ԲԱԳՈՒ. Նիւրանոց Բրաւնտ-Օտէ Եր
(Տ. Ն. Ե.) 8—10

Покупайте только
ПВЪТЧНЫЙ
О-ДЕ-КОЛОНЬ,
ИЗОБРЕТЕННЫЙ
Товариществом
Брокеръ и Ко.
ЭТОТ О-ДЕ-КОЛОНЬ
употребляется
КАКЪ ДУХИ,
ТУАЛЕТНАЯ ВОДА
и курения.
Остерегайтесь
подделок.



2—11 (ամբ. 28)

ԼԱԶԱՐԵԱՆ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Աշակերտների ընդունելութեան քննութիւնները, օգոստոսի հանդէսների պատճառով, կը սկսվեն
օգոստոսի 24-ին: Աստուք կը սկսվի օգոստոսի 27-ին:
1—1 Վերադառնալու պաշտօնակատար՝ Պրօֆէսօր Խալաթեանց

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՈՒՊՐԱՎԱՆ

յայտնում է ի դիմութիւն բոլորի, որ նրա ատենանում, ներկայ թւի օգոստոսի 10-ին,
ցերեկվայ 1 ժամին, նշանակված է ԱՃՈՒՐԻ կապալով տալու Թափառաշրջիկ ՇՆՆՈՒ
բռնելն ու կոտորելը, և ստակած կենդանիների դիակների հաւաքելը: Պայմանագիրը
կարելի է կարդալ լի օրերը 9—1 ժամը:
1—3

ОТКРЫТА ПОДПИСКА

На заканчивающемся печатаниемъ

2-ое вновь обработанное и дополненное издание
ЛИТЕРАТУРНО-НАУЧНАГО СБОРНИКА

„БРАТСКАЯ ПОМОЩЬ ПОСТРАДАВШИМЪ ВЪ ТУРЦІИ АРМЯНАМЪ“.

Въ настоящее удешевленное издание, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержания въ
прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими объём-
ными турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условиями жизни армянъ въ
прошломъ и въ настоящемъ. Въ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 чело-
вѣкъ) армянъ-переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ
числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Трѣбизондѣ 1895 г.“ И. К. Айвазов-
скаго и „Весенняя буря“ Магдесіана, въ три тона.

Цѣна 3 р. на обыкновенной бумагѣ и 5 р. на велевовой
Стоимость пересылки наложеннымъ платежомъ. Число велевowychъ экземпляровъ ограничено, и
подписчики будутъ удовлетворены по времени поступления подписки. Высылающимъ задатокъ 1 руб.
книга будетъ выслана съ переводомъ стоимости наложеннымъ платежомъ.

Подписка принимается: въ Москвѣ: въ конторѣ „Русскихъ Вѣдомостей“, въ книжныхъ
магазинахъ Карбасникова (на Моховой), „Трудъ“ (на Тверской), „Новаго Времени“ (Неглинный про-
ѣздъ) и Волфа (Кузнецкій мостъ); въ Тифлисѣ: въ Центральной книжной торговлѣ, на Головинскомъ
проспектѣ.

НВ. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію „Братской помощи“, благоволятъ послѣднѣе
окончаниемъ таковыхъ.

Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли настоящаго сборника, перепечатать объ-
явление.
Завѣд. ред. Гр. Жаншиевъ.
(б. н.) 2—5

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԵՅԻՆ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքշաբթից:

Եւ հաւաքողի Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսոն և Պոլս: Մեկնում է Բաթում
միջ. չորեքշաբթի, 5/17 օգոստոսի ՍԻՐԱՍՍԻ չորեքշաբթի, նաւագնաց ԳԱՐԻՐԻ: Եւ այսպէս շա-
բաթակարար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմարներ արվում են սովորականից
պակաս գինով:

Կարանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ տալաւու համար
թող բարեհաճին դիմել ընկերութեան գործակաւորներին՝

ԲԱԹՈՒՄԻՍՏԻ—պ. Վիկտոր Դ'Արնոյն, Նաբեքէմայա: ԹԻՖԼԻՍԻՍՏԻ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիօնի փող. Նախկին Արժուոյն քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլլարեանին, Կոլիբեա-
կինոյայա հրապարակ: ՆՈՎՐՈՍՍԻՑԻՍԿ—պ. Մեկիւր Հերշերօղերին: (Կ. Ն. Ն.) 16—20

ՁԵԹԻ ԵՒ ՍԱՊՈՆԻ ԳՈՐԾԱՐԱՆ

Յ. ԹԱՅԻՐՕՎԻ ԵՒ Կ. ԱԼԻՍԱՆՕՎԻ

Վ. Ս. Ճ. Ս. Վ. ՈՒՄ Ե

2 ՈՒՒ ՍԱՊՈՆ

Հինգ զանազան մեծութեան, № 8, 13, 15, 18 և 24.

Դիմել ԿՈՎԿԱՍՏԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԵԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԱՅԱՌՄԱՆ,
(„Кавказское Товарищество Торговли Аптекаремми То-
варами“) և բոլոր բաղաւջ մագաղիններում: Մեծ աքանակ գնումն նոյն իսկ գործա-
րանի մէջ. Ներանհան շօսէ, սեփական տուն:
(Կ. Ն.) 6—12

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՋԱՄԵԱՆ

Հեղինակ Զեմչուրիի աւետարական և գործարանական հաշուաւարական թեան

ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Ե

Երկու սեռի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուաւարական գործնականագէտ, ե-
րաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:

ՊԱՐԱՊՈՒՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ

Ա) Կրկնակի խաղական հաշուաւարական ըստ ամենայն աւետարական ծիւղերի, հան-
դերձ նաւթային արդիւնաբերական և կերտինի գործարանական հաշուետետութեան:

Բ) Աւետարական թուաւորութիւն:

Գ) Աւետարական նամակագրութիւն:

Դ) Գեղագրութիւն և ամենալատ ձեռքերի ուղղութիւն:

Պարագլուխները սկսվելու են սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շաբա-
նակվելու են իւրաքանչիւր 2ՈՒՍ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին
գործնական պարագլուխներ:

Յանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյան,
Ս Օ Ղ Ս Վ Կ, Սերգիսովայա փողոց, տուն Լիսիցեանի, № 20:

Վերջիշաղ հաշուաւարական ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՍՏԻ, Խիլդէկելի գրա-
վաճառանոցում և հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում:

ԴԻՆԵՆ ԵՒ 3 ր. 50 կօպէկ: Օտարաբաղաւորները գրեթէ գնելու համար կարող են դիմել հե-
ղինակին, առանց պատի ծախս վճարելու:
(Կ. Ն.) 13—30